ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար <<Նորք>> ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոցի (ԻԿՀ) վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/13 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի նոյեմբերի 12-ին կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/13 պայմանագրում 2020 թվականի մարտի 11-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	Կատարողի առաջարկության և պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված եզրակացության հիման վրա աշխատանքների կատարման վերջնաժամկետի երկարաձգում:
Փոփոխության նկարագրություն	<<Նորք>> ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոցի (ԻԿՀ) վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/13 պայմանագրի կատարման համար աշխատանքների կատարման վերջնաժամկետի երկարաձգում:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 7.5 և 7.6 կետեր:

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

12.11.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/13 գնման պայմանագրի

ք. Երևան 11.03.2020թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<ԶԱՆԳՎԱԾ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս ընկերության տնօրեն Է. Մարտիրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով <<Նորք>> ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոցի (ԻԿՀ) վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 12.11.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/13 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.6 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

ա) Պայմանագրի N 1 հավելվածի ամբողջ տեքստում աշխատանքների կատարման ժամկետին վերաբերող <<120>> թիվը փոխարինել <<150>> թվով:

բ) Պայմանագրի N 1.1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Համաձայնագրի հավելվածը բաղկացած է 2 (երկու) էջից և համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<ԶԱՆԳՎԱԾ>> ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ք. Երևան, Նոր Նորք Գյուլիքեխվյան փ.7/11
կառավարական տուն 3	<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 11500348005680
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 00891484
Հ/Հ 900011027548	
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան	_____ Է. Մարտիրոսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված
12.11.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/13 պայմանագրի
11.03.2020թ. կնքված N1 համաձայնագրի

<<Հավելված N 1.1
12.11.2019թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/13 պայմանագրի

Օրացուցային գրաֆիկ

«Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոցի (ԻԿՀ) վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման

Հ.հ	ՆՆՓ մշակման աշխատանքի գործընթացները և փուլերը	Շաբաթների քանակը (ընդամենը 150 օրացուցային օր)																					
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22
1	Ելակետային նյութերի հավաքագրում																						
2	Հողատարածքների գեոդեզիական աշխատանքների իրականացում և հանույթների պատրաստում																						
3	Նախագծման առաջադրանքի հիման վրա շենքերի ծավալահատակագծային մանրամասն լուծումների (իրականացում և համաձայնեցում պատվիրատուի հետ																						
4	Համաձայնեցված հատակագծային լուծումների հիման վրա ՃՀԱ ստանալու դիմումի համար անհրաժեշտ ԷՍՔԻԶԱՅԻՆ առաջարկի նյութերի լրակազմի պատրաստում՝ ներառյալ էլեկտրամատակարարման, ջրամատակարարման, գազամատակարարման, հրդեհաշիջման և կոյուղու հաշվարկային հզորությունների տրամադրում																						
5	Անհրաժեշտության դեպքում ստացված ՃՀԱ-ին ճարտարապետաշինարարական լուծումների համապատասխանեցում																						
6	Ներքին ինժեներական ենթակառուցվածքների նախագծային լուծումների մշակում և համաձայնեցում պատվիրատուի հետ																						

7	Արտաքին ինժեներական ենթակառուցվածքների մշակում ստացված տեխնիկական պայմանների հիման վրա և համաձայնեցում պատվիրատուի հետ																							
8	Աշխատանքային նախագծի լրակազմի մշակում և համաձայնեցում պատվիրատուի հետ՝ ներառյալ շինարարության կազմակերպման նախագիծը																							
9	Նախագծի լրակազմի քաղաքաշինական փորձաքննության իրականացում և դրական եզրակացության ստացում																							
10	Մշակված նախագծի հիման վրա նախահաշվի կազմում																							
11	Համաձայնեցում շահագրգիռ մարմինների հետ և անհրաժեշտ եզրակացությունների ստացում																							

>> :

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011027548
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
<<ԶԱՆԳՎԱԾ>> ՍՊԸ
ք. Երևան, Նոր Նորք Գյուլիքեխվյան փ.7/11
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 11500348005680
ՀՎՀՀ 00891484

Տնօրեն՝

_____ Է. Մարտիրոսյան
(ստորագրություն)

Կ.Տ.